— Ես գիտեմ...: Բայց դու լաւ ընկեր չես, Ֆարհատ, ամօ՛թ քեզ համար, — փոխեց նա իր խօսքը: — Քեզ հետ ժամադիր եղող աղջիկը այնքան շտապեց, որ թողեց «Կաթնաղբիւրի» մօտ իր սանդրը. բայց դու այնքան անշնորհք գտնոեցար, որ չկարողացար նկատել: Ա՛ռ, քեզ եմ տալիս, տար, առաւօտեան իրան տո՛ւր, գլուխդ գովի՛ր, ասա՛, ես գտայ, թող երեսդ սպիտակի:

Այժմ ես հասկացայ, թէ ինչու էր Մարօն բարկացել իմ վրայ: Նա տոեց ինձ մի սանդր. դա Սօնայի սանդրն էր, որ մոռացմամբ թողել էր «Կաթնաղբիւրի» մօտ լողանալու ժամանակ: Բայց որտեղի՞ց էր ընկել Մարօի ձեռքը:

— Ո՞վ տոեց քեզ այդ սանդրը, — հարցրի ես:

— Ես ինքս գտայ այնտեղ:

— Դու մեզ տեսա՞ր:

— Կոյր չէի: որ չտեսնէի:

— Բայց մենք ինչո՞ւ չտեսանք քեզ:

— Ես շատ անգամ դեւի պէս աչքի չեմ երեւում, — պատասխանեց նա ծիծաղելով:

Մարօի խորամանկութիւնները ես վաղուց գիտէի. այդ պատճառով իսկոյն չկարողացայ հաւատալ նրան եւ ասեցի.

— Դու սուտ ես խօսում, այս սանդրը ուրիշ կերպով հասել է քո ձեռքը:

— Չե՞ս հաւատում ինձ, — պատասխանեց նա պինդ ձայնով: — Կուզե՞ս բոլորը կը պատմեմ. նա աղբիւրի մէջ լողանում էր. դու հեռոից ապուշի պէս նայում էիր. յանկարծ անցաւ ձորի միջով ճգնաւորը. նա երգում էր մի տխուր մեղեդի: Յետոյ յայտնոեցան Սուսանը եւ Հիւբբին, իսկ դուք բարձրացաք բլուրի վրայ, նստեցիք նշենիների թփերի մէջ: Թէ կուզես, կը պատմեմ դուք ինչ խօսեցիք:

— Հիմա հաւատում եմ:

Մարօն մտածութեան գնաց եւ որպէական լռութիւնից յետոյ խօսեց.

— Խե՜ղճ Սօնա, որքա՜ն անբախտ է նա... իմ սիրտը չդիմացաւ, երբ նա այնպէս ցաւալի կերպով խօսում էր իր մօր մահոան մասին եւ իր եղբօր կորստեան մասին: Իմ սիրտը չդիմացաւ, եւ ես թաքնոած թփերի մէջ, լաց էի լինում, Ֆարհատ:

Վերջին խօսքերի միջոցին ես նկատեցի Մարօի աչքերում արտասուք:

— Դու հիմա էլ լաց ես լինում, — ասացի նրան: